

ՔԱՂՎԱԾՔ # 1

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

23 ապրիլի 2013թ.

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահի տեղակալ Լիլիթ Դունամայանը: Ներկայացնելով Ընկերության 2012թ տարեկան գործունեությունը՝ զեկուցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2012 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 20,107,785.00 (Քսան միլիոն մեկ հարյուր յոթ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 382,047,915.00 (Երեք հարյուր ութսուներկու միլիոն քառասունյոթ հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Քվեարկության դրվեց Ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2012 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 20,107,785.00 (Քսան միլիոն մեկ հարյուր յոթ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 382,047,915.00 (Երեք հարյուր ութսուներկու միլիոն քառասունյոթ

հազար ինը հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել
«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Օրակարգը սպառվեց և նիստի նախագահողը ժամը 17:00-ին նիստը հայտարարեց
փակված:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Մայրանուշ Գրիգորյան

ք. Երևան

---,----,2013թ